«Քայլ առ քայլ»
բարեգործական հիմնադրամ

«Նախադպրոցական հաստատության
մանկավարժական աշխատողների
մասնագիտական կարողությունների և
հմտությունների զարգացման » ծրագիր

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Թեմա՝ Սաների մեջ ինքնուրույնության, նախաձեռնողականության և ստեղծագործական ունակությունների զարգացումը

Դաստիարակ՝ Արմինե Միրզախանյան
Մանկապարտեզ՝ «Դալարիկի մանկապարտեզ» ՀՈԱԿ

ԲՈՎԱՆԴԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Ներածություն ----------3

2. ԳԼՈՒԽ 1. Սաների մեջ ինքնուրույնության, նախաձեռնողականության և ստեղծագործական ունակությունների զարգացումը

1.1 Ինքնուրույնություն ---------- 5

3. 1.2 Ստեղծագործական ունակություններ----------9

4. ԳԼՈՒԽ 2 Հետազոտության ընթացքը----------11

5. 2.1 Խոսքի զարգացման պարապմունքի պլան----------12

6. Եզրակացություն----------16

7. Օգտագործված գրականության ցանկ----------17

Ն Ե Ր Ա Ծ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

Ժամանակակից կրթական համակարգի կարևոր խնդիրներից և արժեքային կողմնորոշիչներից մեկն է սաների մեջ ինքնուրույնության և ստեղծագործական ունակությունների ձևավորումն ու զարգացումը: Այս որակները օգնում են անձին հետագայում ինքնադրսևորվել կյանքի բոլոր բնագավառներում: Սաները այս որակների շնորհիվ զարգացնում են իրենց ճանաչողական կարողություններն ու հմտությունները:

Կրտսեր տարիքի երեխաների մեջ ինքնուրույնության ևնախաձեռնողականության զարգացումը էապես կախված է մեծերից, հարազատներից և դաստիարակներից, ովքեր շրջապատում են երեխային:

Ինքնուրույնությունը կրտսեր տարիքում բավականին մեծ դեր ու նշանակություն ունի:

Մանկավարժների առջև բավականին հստակ պահանջ է դրված, սաներին մեջ սերմանել ինքնուրույնությունը, նոր գիտելիքներ ստանալու և դրանք մշակելու ունակությունը, ստեղծագործական մոտեցում ցուցաբերելու հատկությունը, տարբեր աղբյուրներից ստացված գիտելիքները մշակելու, վերլուծելու և դրանք առանձնահատուկ կերպով կիրառելու ձգտումը:

Կարևոր խնդիր է նաև սովորեցնել երեխաներին ստեղծագործաբար մոտենալ առկա խնդիրներին՝ չվախենալով ուսման մեջ առկա դժվարություններից:

Ինքնուրույնության և ստեղծագործական հմտությունների ձևավորման և զարգացման մեջ հսկայական է դաստիարակի դերը: Երեխաների ինքնուրույնությունը զարգանում է աստիճանաբար, պարապմունքից պարապմունք:

Տվյալ հետազոտական աշխատանքի շրջանակներում ես իմ առջև նպատակ եմ դրել ուսումնասիրել սաներիս ինքնուրույնության, ստեղծագործականության խթանման գործընթացի առանձնահատկությունները: Այս նպատակի իրացման համար վեր են հանվել և առաջադրվել են հետևյալ կարևոր խնդիրներ.

- Ուսումնասիրել ինքնուրույնության և ստեղծագործականության խթանման հիմնական մանկավարժական միջոցները
- Պարզել, թե ինչպես են ազդում ստեղծագործական խաղերը աշակերտների ինքնուրույնության և ստեղծագործականության խթանման վրա:
- Առանձնացնել այն խնդիրները և դժվարությունները, որոնք առաջանում են աշակերտների ինքնուրույնության խթանման գործում:
- Առաջարկել ինքնուրույնության և ստեղծագործականության խթանման ժամանակակից միջոցներ և եղանակներ:

Այսպիսով, հավելենք, որ նախադպրոցական ուսումնական հաստատությունում՝ սաների ինքնուրույնության խթանման առաջնային նպատակն է սանի անձի և նրա ստեղծագործական ընդունակությունների զարգացումը: Այս նպատակի իրացմանն անհրաժեշտ է մոտենալ քայլ առ քայլ, կիրառելով տարբեր մանկավարժական միջոցներ, ուսուցման մեթոդներ

ԳԼՈՒԽ 1. ՍԱՆԵՐԻ ՄԵՋ ԻՆՔՆՈՒՐՈՒՅՆՈՒԹՅԱՆ, ՆԱԽԱՁԵՌՆՈՂԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՍՏԵՂԾԱԳՈՐԾԱԿԱՆ ՈՒՆԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ

1.1 Ինքնուրույնություն

Կրտսեր սանի տարիքը, մանկավարժների և հոգեբանների կարծիքով, առավել կարևոր է երեխաների մեջ տարբեր որակների և հատկությունների զարգացման համար, որոնց օգնությամբ նրանք կկարողանան դրսևորել հետագա կյանքում, կենսագործունեության տարբեր ոլորտներում: Այդպիսի որակներից են ստեղծագործական ակտիվությունը, ինքնուրույնությունը, վստահությունը, պատասխանատվության զգացումը, համառությունը և այլն: Այս տարիքում երեխայի կայացման կարևոր ուղղություններից է ինքնուրույնության զարգացումը, որը մեծապես որոշում է երեխայի հաջող գործունեությունը հետագա կյանքում:

Ինքնուրույնությունը ձևավորվում է աստիճանաբար՝ երեխայի յուրաքանչյուր տարիքային փուլում, ընդ որում յուրաքանչյուր տարիքում այն ունի տարբեր հատկություններ և դրսևորման ձևեր: Միևնույն ժամանակ, յուրաքանչյուր տարիքային փուլում անհրաժեշտ է, որպեսզի երեխաների ինքնուրույնության ձգտումը խրախուսվի մեծերի կողմից համապատասխան չափաբաժիններով և ռացիոնալ կերպով՝ զարգացնելով անհրաժեշտ հմտություններ և կարողություններ երեխաների մեջ:

Ինքնուրույնությունը սերտորեն կապված է այնպիսի հոգեբանական հատկանիշի հետ, ինչպիսին է երեխայի կամքը, որի շրջանակներում երեխան գիտակցված կերպով կարգավորում է սեփական վարքը և գործունեությունը: Վերջիններս, իրենց հերթին, դրսևորում են երեխայի կարողության մեջ՝ հաղթահարել դժվարությունները, որոնք հանդիպում են առաջադրված նպատակին հասնելու ճանապարհին:

Կրտսեր տարիքում սանը սովորաբար ունի դրական տրամադրվածություն շրջապատող իրականության հանդեպ, սիրում է խաղալ և երևակայել: Այս տարիքում երեխան, որպես կանոն, արդեն հակված է սեփական կարծիքունենալու, սակայն մեծի հեղինակությունը կարող է մեծ ազդեցություն ունենալ այդ կարծիքի ձևավորման և զարգացման վրա: Այս ամենը անմիջականորեն ազդում է երեխայի և շրջակա իրականության միջև փոխազդեցությունների վրա:

Գիտակցելով, որ ինքնուրույնությունը անձի կարևորագույն բաղդրիչներից մեկն է, բազմաթիվ ժամանակակից գիտնականներ ուշադրություն են կենտրոնացրել դրա էության ուսումնասիրության վրա: Իսկապես, ինքնուրույնության դաստիարակման խնդիրը ենթադրում է այդ ֆենոմենի հստակ սահմանում և դրա հատկանիշների առանձնացում:

Այսպես, ըստ Ս. Օժեգովի բառարանի, ինքնուրույն՝ հասկացությունը ունի մի քանի սահմանումներ[1].

- Անկախ, ազատ
- Անկախ գործողություններ և դատողություններ կատարելու ունակություն
- Մյուսներից առանձնացված
- Ինքնուրույն ուժերով կատարվող գործունեություն՝ առանց կողմնակի օգնության և ուղղորդման
- Կողմնակի ազդեցությունից անկախ

Զ. Շինտարը ինքնուրույնության ֆենոմենը սահմանում է, որպես անկախություն, անձի ձգտում և ունակություն, գործողություններ կատարել առանց շրջապատող անձանց օգնության[2]:

Դառնալ ինքնուրույն և նախաձեռնող – օբյեկտիվ անհրաժեշտություն է և յուրաքանչյուր երեխայի բնական պահանջ: Սակայն, ինքնուրույն գործելու ունակությունը չի բացառում կողմնակի օգնության հնարավորությունը և, նույնիսկ, ցանկալիությունը:

Ինքնուրույնությունը սահմանվում է ոչ միայն որպես ազատություն արտաքին ազդեցություններից և պարտադրանքներից, այլև որպես ընդունակություն հակազդել արտաքին ազդեցություններին և վերամշակել դրանք սեփական գիտակցության մեջ:

Ըստ մանկավարժական հանրագիտարանային բառարանի ինքնուրույնությունը սահմանվում է որպես անձի առանցքային որակներից մեկը, որն արտահայտվում է կարողության մեջ նպատակներ սահմանել և սեփական ուժերով հասնել դրանց իրականացմանը:

Միևնույն ժամանակ, ինքնուրույնության տակ ենթադրվում է անձի պատասխանատու վերաբերմունքը սեփական արարքների հանդեպ, ընդունակություն ցանկացած իրավիճակում գործել գիտակցված և նախաձեռնողական, կայացնել ոչ ավանդական և ոչ ստանդարտ որոշումներ:

Դ. Էլկոնին դիտարկում է ինքնուրույնությունը, որպես անձի ինտեգրալային հատկություն, որն արտացոլում է անձի կոգնիտիվ և կամային հատկանիշների միասնություն, ստեղծագործական և ակտիվ վերաբերմունք արտաքին աշխարհի հանդեպ:

Առաջատար հոգեբաններ և մանկավարժներ Վ. Դավիդովի, Գ. Ցուկերմանի և այլոց կարծիքով կրտսեր սաների ինքնուրույնությունը և նախաձեռնողականությունը պարապմունքում առաջին հերթին արտահայտվում է կարողության և ընդունակության մեջ ինքնուրույն մտածել, կողմնորոշվել նոր իրավիճակում, ինքնուրույն տեսնել խնդիրը և դրա լուծման ուղիները:

Մանկական ինքնուրույնությունը վերջին ժամանակներում բավականին լայն քննարկման

թեմա է դարձել: Արդեն 3 տարեկանում երեխայի մոտ կտրուկ աճում է ինքնուրույնության և մեծերից կախված չլինելու ձգտումը ինչպես գործողություններում, այնպես էլ ցանկություններում: Վաղ նախադպրոցական տարիքում ինքնուրույնության արտահայտումը անհատի ձևավորման ճիշտ և սկզբնական փուլն է:

Մանկավարժության պատմության մեջ գործում է վստահելի մի մեթոդ, որն է բոլորիս հայտնի Մոնթեսորիի մեթոդը. այն ուղղված է երեխայի ինքնուրույնության զարգացմանը: Մեթոդի կարգախոս կարելի է համարել հետևյալը՝ օգնի՛ր ինձ գործել ինքնուրույն:

Ինքնուրույն երեխան՝ ազատ և անկախ անհատն է, ով իր հիմնական կարիքները բավարարելու համար կախված չէ մեծերից: Սանի ինքնուրույնության ձևավորման կարևոր գործոն է նրան սխալվելու վախից ազատելու գործընթացը: Միայն չսխալվելու կամ թույլ տված սխալն անկարող լինել ուղղելու բարդույթից զերծ անհատն է ի զորու գործել ինքնուրույն:

Հաճախ նախադպրոցական տարիքի երեխայի ինքնուրույնության մասին խոսելիս նկատի ենք ունենում ինքնուրույնության միայն մի՝ ինքնասպասարկման կողմը. դա կապում ենք սանի ինքնուրույն հանվել- հագնվելու, լվացվելու, սնվելու հետ: Դրանք, անշուշտ, նույնպես համարվում են ինքնուրույնության դրսևորման կարևորագույն գործոններ, սակայն միայն արտաքին, տեսանելի ձևերն են: Գոյություն ունի, բնականաբար, նաև ներքին, ոչ առերևույթ շերտը. նրանք սերտորեն շաղկապված են, լրացնում են մեկը մյուսին:

Այսպես, մեր ՆՈՒՀ-ում մեծ տեղ է տրվում սանի ինքնուրույնությանը: Մեր 3-4 տարեկան սաները կարող են ինքնուրույն սնվել, իրենց հնարավորությունների չափով հանվել, հագնվել, լվացվել: Երբեք ցուցադրական, շինծու ոչինչ չի արվում. նկարում ենք, ինչպես կարող ենք, ծեփում ենք, ինչպես կստացվի, չենք համեմատում ստացված արդյունքները, առավելություն տալով մեկին՝ կամ նսեմացնելով մյուսին. դրվատում, ոգևորում ենք բոլորին:

[1] https://slovarozhegova.ru/

[2] https://infourok.ru/pedagogicheskie-usloviya-vospitaniya-samostoyatelnosti-uchaschihsya-v-nachalnoy-shkole- 3773403.html

Ցանկացած սան անհատ է, նա ունի իր առանձնահատկությունները և մենք, լավ ճանաչելով մեր սաներին, խրախուսում ենք նրանց, ջերմորեն գնահատում անգամ աննշան ձեռքբերումը, դրանով իսկ բարձրացնելով նրանց ինքնահաստատումը: Վերջին հաշվով նպաստում ենք նրանց ինքնուրույնության զարգացմանը: Մենք՝ դաստիարակներս, չենք միջամտում, խանգարում, առավել ևս իրենց փոխարեն ինչ-որ բան անում՝ արագ վերջացնելու, առաջ անցնելու նպատակով, քանի որ երեխայի շահը գերակա է: Որպես վառ օրինակ կարող եմ բերել գլուխկոնծի տալու կարողությունը: Հիմնականում նոր սաները չեն կարողանում գլուխկոնծի տալ: Մարզական խաղերի ժամանակ բոլորս համբերատար սպասում ենք, մինչև սանը թեկուզ 10-15 անգամ փորձի, որ ստացվի, ստացվելուն պես բոլորս ծափահարում և ոգևորում ենք, չստացվելուց էլ՝ չենք մատնանշում, այլ կրկին ու կրկին հորդորում ենք փորձել, մինչև կստացվի: Արդյունքում ունենում ենք խնդրի լուծման համար ինքնուրույն ելք փնտրող և բնականաբար այդ ելքը գտնող անհատ:

Սաների հետ աշխատանքը մեր կողմից տարվում է ոչ ստիպողաբար. մասնագիտական մեր հմտությունները կիրառելով՝ հասնում ենք նրան, որ նա իր կամքով, իր ինքնուրույն որոշումով միանա մեզ: Ի վերջո, շնորհիվ տնօրինության ընձեռած հնարավորությունների և անսահման ազատության՝ կարողանում եմ ինձ վստահված մատղաշ ծիլերի մեջ սերմանել ինքնուրույնություն և ինքնավստահություն, որն էլ իրենց հետագա ստացված կյանքի գրավականը կլինի:

Մեծանալու ամենակարևոր դրսևորումներից մեկը ինքնուրույն լինելն է, և շատ կարևոր է չխանգարել տվյալ որակի ձևավորմանը, այլ հնարավորինս խթանել:

Ուղղորդել սաներին ինքնուրույնության՝ ենթադրում է զարգացնել նրանց մոտ մի շարք կարևոր հատկանիշներ, ինչպիսիքն են՝ նախաձեռնողականությունը, ակտիվությունը, ինքնավստահությունը և այլն:

Հաճախ օգտվելով ռոդարիական հնարներից հորինում և խաղում ենք մի շարք խաղեր, որի արդյունքում ինքնակրթվում ենք, չենք վախենում սխալվելուց, լինում ենք անընդհատ բացահայտողի դերում, դառնում՝ ավելի ինքնավստահ: Շատ կարևոր է, որ այդ տարիքային ճգնաժամերը հաղթահարելիս մենք՝ մանկավարժներս (ծնողները), հաճախ ոգևորենք, խրախուսենք երեխային՝ մեծերի համար գուցե չնչին թվացող, երեխայի համար՝ կատարած ահռելի աշխատանքը: Երբեք պետք չէ թերագնահատել նրանց, անգամ սխալվելու դեպքում: Սրանք քայլեր են, որոնք բացասաբար են ազդում երեխայի «ես»-ի զարգացման վրա: Պետք է շատ վստահել նրանց, նրանք դա շատ լավ զգում են: Հենց փոքր տարիքից պետք է տալ ազատություն՝ հեռվից հետևելով քայլերի հաջորդականությանը:

1.2 Ստեղծագործական ունակություններ

Ստեղծագործական ընդունակությունները հարկավոր է զարգացնել երեխաների մոտ սկսած ամենավաղ տարիքից:

Գոյություն ունի կարծիք, որ ստեղծագործականությունը անձի բնածին հատկությունն է, որոշ երեխաների մոտ այն առկա է, որոշների մոտ՝ ոչ: Սակայն, բազմաթիվ հոգեբանական և մանկավարժական հետազոտությունների արդյունքում պարզ է դարձել, որ բնածին կարող են լինել միայն ստեղծագործականության հակումները: Որպեսզի դրանք դառնան ստեղծագործական մոտեցումներ և ճկուն միտք, այդ հակումները պետք է մշտապես զարգացնել:

Տվյալ խնդրի շուրջ առկա որոշ գրական աղբյուրների ուսումնասիրությունը ցույց է տվել, որ ստեղծագործականության խնդիրը տարբեր կերպ է մեկնաբանվում տարբեր հեղինակների, մասնագետների կողմից: Այսպես օրինակ, Ե. Տունիկը, ով զբաղվել է է. Տրոնսի գիտական հայացքների խորին ուսումնասիրմամբ, ըստ վերջինիս հայեցակարգի մեկնաբանում է ստեղծագործականությունը, որպես անձի ընդունակություն, որը մշտապես գտնվում է զարգացման գորշ ընթացում և կախված է բազմաթիվ ներքին և արտաքին պայմաններից, գործոններից[3]:

Հեղինակն առանձնացնում է ստեղծագործականության հետևյալ չափանիշները.

- Մտքի սահունություն
- Մտքի ճկունություն
- Մտքի օրիգինալություն /յուրօրինակություն
- Մտքի մշակվածություն

Ն. Լեյտեսը նշում էր, որ ստեղծագործականությունը հզոր գործոն է հանդիսանում անձի զարգացման գործընթացում, որով բնութագրվում է տվյալ անձի պատրաստակամությունը փոխելու, հրաժարվելու կարծրատիպերից, ազդելու շրջակա իրականության վրա:

Այսպիսով, ստեղծագործականությունը սահմանվում է, որպես անձի ընդունակություն ծնելու նոր գաղափարներ գործունեության այս կամ այն ոլորտում, որոնք կնպաստեն առաջադրված խնդիրների էլ ավելի արդյունավետ լուծմանը: Այս ընդունակությունը կարող է արտահայտվել աձի մտածողության, ընկալման, երևակայության, էմոցիաների, ինչպես նաև իր գործունեության արդյունքների մեջ:

Հայտնի են նաև ստեղծագործականության և ինքնուրույնության որոշ տարիքային առանձնահատկություններ: Այսպես, օրինակ, Ա. Բելոուսովան կարծում է, որ վաղ մանկական տարիքում ստեղծագործականությունը խթանման վրա մեծապես ազդում են

էմոցիաները:

Սակայն ստեղծագործական գործընթացի կարգավորման զգացմունքային, էմոցիոնալ հիմքի առկայությունը դեռևս չի սպառում այս ֆենոմենի զարգացման մեխանիզմը երեխաների մոտ: Գոյություն ունեն նոր գաղափարների ստեղծման նաև այլ տեխնոլոգիաներ: Օրինակ, զարգացնող ուսումնառության հայեցակարգում ստեղծագործական գործընթացը կապվում է տեսական մտածողության հետ:

ՆՈՒՀ-ում սաների ստեղծագործականության խթանման գործում կարևոր նախապայման է մանկավարժի ներազդեցությունը նրանց մտածողության գործընթացի վրա:

Այսպիսով, ստեղծագործականությունը սանի ներքին ակտիվությունն է, որը կապված է նրա հետաքրքրությունների, բնավորության և անձի առանձնահատկությունների, մտածողության առանձնահատկությունների հետ:

[3]https://4brain.ru/D0%B0%D1%82%D0%B8%D0%B2%D0%BD%D0%BE%D1%81%D1%82%D0%B

ԳԼՈՒԽ 2

ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ԸՆԹԱՑՔԸ

Նախադպրոցական ուսումնական հաստատությունում դաստիարակի աշխատանքի և սանի ուսումնական հաջողությունների արդյունքները չափվում են ձեռք բերված գիտելիքներով, կարողություններով ու հմտություններով: ՆՈՒՀ-ի կարևորագույն խնդիրներից են դառնում սանի կրեատիվության, նրանց ստեղծագործական մտածողության, ինքնուրույն որոշումներ կայացնելու կարողությունների ձևավորումն ու զարգացումը[4]:

Դիտարկենք, որտեղ և ինչպես է առավել լիարժեք կերպով արտահայտվում և զարգանում կրտսեսանի ինքնուրույնությունընև ստեղծագործականությունը՝ հիմնվելով հետազոտողի մանկավարժական փորձի և համապատասխան գործունեության ընթացքում արված եզրակացությունների վրա:

Ուսումնական գործընթացում կրտսեր սանի ինքնուրույնությանը, ստեղծագործականությանը և նախաձեռնողականությանը նպաստելու համար անհրաժեշտ է երեխային հնարավորություն տալ ինքնուրույն մտածել և արտահայտի սեփական տեսակետը այս կամ այն հարցի շուրջ:

Դաստիարակները նաև պետք է ձգտեն, որպեսզի սանը ինքնուրույն կատարի ուսումնական առաջադրանքները, առանց կողմնակի օգնության: Մեծ նշանակություն ունեն ինքնուրույն աշխատանքները և ստեղծագործական առաջադրանքները ուսումնական պրոցեսում: Ընդ որում, դրանց պարագայում օգնության աստիճանը կարող է կախված լինել կոնկրետ երեխայի առաջադիմությունից::

Դիդակտիկ խաղերին կրտսեր սանի մասնակցությունը նպաստում է նրանց ինքնահաստատմանը, ինքնադրսևորմանը, ինքնաիրացմանը, տարբեր դրդապատճառներով պայմանավորված՝ դրանք ձևավորում են հաջողության, հաղթանակի հասնելու կայուն ձգտումներ, կամային որակներ:

Ստորև կներկայացնեմ ավագ խմբում խոսքի զարգացման պարապմունքի պլան: Դասը կանցկացվի զրույցի մեթոդով: Պարապմունքի պլանավորումը համապատասխանում է ԿԶՆԱԿ-ի կողմից առաջադրված ավագ խմբի նախադպրոցական համալիր ծրագրին: Պարապմունքը կանցկացի տնօրենի, մեթոդիստի ներկայությամբ:

---

[4] https://lib.armedu.am/categor

2.1 Խոսքի զարգացման պարապմունքի պլան

Թեմա՝ Բաղաձայն և ձայնավոր հնչյուններ:

Պարապմունքի նպատակը՝ գաղափար տալ բաղաձայն եվ ձայնավոր հնչյունների մասին: Սովորեցնել կատարել երեք և չորս հնչյուն ունեցող, հնչյունային տարբեր կառուցվածքի բառերի հնչյունային վերլուծություն, այսինքն' սահմանել վերլուծվող բառերի, հնչյունների հաջորդականությունը, անվանել առանձնացված հնչյունները' բառի մեջ իրենց հնչեղության համապատասխան:

Վերջնարդյունքը՝ տարբերի ձայնավոր, բաղաձայն հնչյունները, պատմի նկարի բովանդակությունը:

Անհրաժեշտ պարագաներ. Կարմիր և կապույտ վահանակներ, փոստատարի պարկ՝ մեջը լցված ծրարներ, որոնց մեջ դրված են նամակները (փոքրիկ թեմատիկ նկարներ պարզ բովանդակությամբ):

Պարապմունքի ընթացքը՝ Նախ և առաջ դաստիարակը երեխաներին նստեցնում է շրջանաձև: Դաստիարակը ցուցադրում է 3 կամ 4 հնչյունից կազմված առարկաների նկարներ: Դաստիարակը երեխաներին հարցնում է, թե ի՞նչ պատկերներ են տեսնում: Այնուհետև երեխաները դաստիարակի օգնությամբ այդ պատկերների հնչյուններն են արտասանում: Դաստիարակը բացատրում է բաղաձայն և ձայնավոր հնչյունների ատասանելու տարբերությունները: Այնուհետև դաստիարակը բաժանում է երեխաների կարմիր և կապույտ վահանակներ: Հետո դաստիարակը արտասանում է հնչյուններ և սաները բարձրացնում են համապատասխանաբար կապույտ (ձայնավոր հնչյուն) կամ կարմիր (բաղաձայն հնչյուն) վահանակ: Պարապմունքը ամրապնդում ենք խաղով:

Խաղի անվանումը՝ «Փոստատարը նամակ բերեց»

Խաղի ընթացքը. Երեխաներից մեկը՝ պարկն ուսին դուրս է գնում: Դաստիարակը ներկայացնում է.

- Երեխանե՜ր, այսօր Կարենը մեր փոստատարն է: Տեսնենք նա ու՞մ է նամակ բերում: Իսկ ինչպե՞ս պիտի կարդաք այդ նամակը՝ նկարներով (ծրարների մեջ նկարներ են, որոնք պատմում են ինչ-որ դեպքերի կամ ինչ-որ մեկի մասին):

Առաջինը դաստիարակն է ստանում նամակ և խոսում նկարի շուրջ, այնուհետև վերցնում եմ նկարից ինչ-որ բառ և արտասանում հնչյունները՝ նշելով բաղաձայն է, թե ձայնավոր: Դաստիարակի օրինակով սաները հերթով ստանում են նամակ և

ներկայացնում:

Նմանօրինակ խաղերի ժամանակ շատ կարևոր է սաների մոտ հետաքրքրություն խթանել տրված խնդրի և նրա լուծման գործընթացի հանդեպ:

Ժամանակակից ՆՈՒՀ-ում սանը ուսումնական գործընթացում հանդես է գալիս, որպես ուսումնառության սուբյեկտ, համագործակցում է մանկավարժի հետ: Սա հենց այն առանձնային-կողմնորոշված ուսումնառության ոճն է, որը հանդիսանում է կրեատիվության զարգացման բարենպաստ գործոն: Հենց այսպիսի միջավայրում մանկավարժը պետք է առաջին հերթին ձգտի բարենպաստ պայմաններ ստեղծել՝ սաների ստեղծագործականության լիարժեք զարգացմաան համար, քանի որ ստեղծագործականությունը թույլ է տալիս աշակերտին հանդես գալ, որպես ուսման գործընթացի ակտիվ մասնակիցը, իրականացնել սեփական մտահղացումները:

Հիմնվելով իմ մանկավարժական փորձի վրա, կարող եմ հավաստիացնել, որ կրտսեր նախադպրոցականների մոտ ինքնուրույնության և ստեղծագործականության զարգացմանը մեծապես նպաստում է ընտրության իրավիճակի ստեղծումը դասի ժամանակ, քանի որ հենց ընտրության իրավիճակն է նպաստում որոշակի աստիճանի ազատության ձևավորմանը: Այսինքն, այս պարագայում աշակերտը հնարավորություն է ստանում ինքնուրույն ընտրել այս կամ այն իրավիճակում վարքի առավել հարմար տարբերակը կամ խնդրի լուծման եղանակը: Նիևնույն ժամանակ, կատարելով ընտրություն առկա տարբերակների միջև, աշակերտը սովորում է նաև պատասխնատվություն կրել իր ընտրության համար, հետևաբար, նաև ստացված արդյունքի համար: Մանկավարժական գործընթացում կարևոր է, որպեսզի այդ ազատությունը լինի պոզիտիվ, այսինքն ինքնաբավ:

Ինչպես նաև, կրտսեր դպրոցական տարիքում ինքնուրույնության և ստեղծագործականության զարգացումը առավել արդյունավետ է տեղի ունենում, քանի որ երեխաները այս տարիքում առավել հետաքրքրված են շրջապատող իրականությամբ, պահանջ ունեն ինքնուրույն գործունեության, սակայնմիևնույն ժամանակ, մեծի հեղինակությունը դեռևս նշանակալի է երեխայի համար, ինչն օգնում է մանկավարժին ուղղորդել սանի գորրծունեությունը: Յուրաքանչյուր սան անհատականություն է, և ինքնուրույնության և ստեղծագործականության դրսևորման աստճանը յուրաքանչյուրի մոտ կարող է տարբեր լինել:

Փորձը ցույց է տալիս, որ կարելի է առանձնացնել մի շարք խնդիրներ, որոնք փոխադարձաբար կապակցված են սաների ստեղծագործականության, ինքնուրույնության զարգացման հետ: Այդ խնդիրներն են.

- ✓ Երեխայի ստեղծագործական ունակությունների և ինքնուրույնության զարգացում:

- ✓ Բանավոր խոսքի զարգացում
- ✓ Ինքնարտահայտվելու կարողության զարգացում
- ✓ Ազատ և անկաշկանդ շփում հասակակիցների և մեծերի հետ
- ✓ Նախաձեռնելու, համախմբված աշխատելու հմտությունների ձեռքբերում
- ✓ Աշխատասիրության, պատասխանատվության, ուշադրության դրսևորում
- ✓ Գեղագիտական ճաշակի զարգացում
- ✓ Տեսածի, լսածի վերաբերյալ խոսելու կարողություն
- ✓ Իրավիճակը շտկելու կարողություն
- ✓ Բարդույթներից ազատագրում

Ենթադրվում է, որ ուսումնական գործընթացում սաների ինքնուրույնութունը և ստեղծագործականությունը խթանելու հիմնական բաղադրիչ գործողություններն են.

- ✓ Խնդրի պլանավորում և բաշխում
- ✓ Համապատասխան նյութերի և դիդակտիկ միջոցների կիրառություն
- ✓ Ստեղծագործելու ազատություն
- ✓ Խրախուսում և գնահատում
- ✓ Սխալի իրավունքի պահպանում
- ✓ Հարգանք ընկերոջ կարծիքի նկատմամբ
- ✓ Համագործակցություն

Ինքնուրույնության և ստեղծագործականության խթանման նպատակով, ենթադրում եմ, որ աշակերտների մոտ ձևավորվելով որոշակի առումով ազատ տարածք սեփական մտքերը և կարծիքները արտահայտելու, բաց քննարկումներին մասնակցելու, ինչպես նաև դրանք ինքնուրույն խթանելու և կազմակերպելու համար, սաները կարողացան բավականաչափ ինքնահաստատվել, ավելի վստահ և ինքնուրույն զգալդասի ժամանակ և տնային հանձնարարություն կատարելիս: Շատ կարևոր գործոն է նաևդաստիարակի՝ խրախուսելու և սանի սխալվելու իրավունք վերապահելու մարտավարությունը, որը նա կիրառեց հետազոտական դասերի ընթացքում: Իսկ այս գործոնները ինքնստիքյան բերում են անձի մոտ ստեղծագործական մտքի խթանմանը, առավել ազատ և անկաշկանդ ուսումնական գործընթացի կազմակերպմանը:

Ինքնուրույնությունը և ստեղծագործականությունը հիմնված են երևակայության, ինտելեկտի, գյուտարարության և ինքնակրթության վրա: Կարելի է առանձնացնել

ինքնուրույնության երեք հիմնական բաղադրիչներ.

1. Իրազեկություն՝ գիտելիք, հմտություն, փորձ
2. Ստեղծարար մտածողություն՝ ճկունություն, համառություն որոշում կայացնելիս, կրեատիվ մտածողության մեթոդների կիրառում
3. մոտիվացիա՝ ներքին՝ սեփական հետաքրքրվածությունը խնդրի լուծման ժամանակ, ինքնակատարելագործման ձգտում և գիտելիքների կիրառում, և արտաքին մոտիվացիա՝ նյութական խրախուսում և առաջխաղացում:

Ինքնուրույնության և ստեղծագործական հմտությունների ձևավորման համար վտանգավոր է հին մեթոդների կիրառումը, որոնք թույլ չեն տալիս նոր գաղափարի և դրա իրականացման համար համապատասխան հմտությունների և գիտելիքների դրսևորմանը: Ինքնուրույնությունը և ստեղծագործականությունը, ինչպես նաև յուրաքանչյուր ընդունակություն, անընդհատ զարգացման կարիք ունեն: Կան մի շարք գործողություններ, որոնց իրականացման դեպքում բարձրանում է սանի ինքնուրույն աշխատելու ցանկությունը՝

- ✓ Հոգեբանական հատկանիշների վերլուծություն՝
- ✓ Մտքերի վերարտադրության մեթոդների ուսուցանում
- ✓ Խմբում աշխատելու կանոնների ուսուցում և դերերի բաշխում

Սանի ինքնուրույնության բարձրացման կարևոր միջոց է մոտիվացիայի բարձրացումը

Այսպիսով, ՆՈՒՀ-ում սովորող աշակերտների ինքնուրույնությունը և ստեղծագործ ունակությունները խթանում են մանկավարժական հաջող գործունեությունը, որն իրականացվում է համապատասխան մեթոդների, միջոցների օգնությամբ, կիրառելով նորագույն տեխնոլոգիական միջոցներ:

Քանի որ այժմ գտնվում ենք արձակուրդում և չենք կարող իրականացնել պարապմունք, ուստի տնօրենը և մեթոդիստը չեն կարող պատասխանել առաջադրված հարցերին:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Այսպիսով՝ հենվելով թեմատիկ մանկավարժական գրականության ուսումնասիրության, ինչպես նաև իմ մանկավարժական գործունեության ընթացքում ձեռք բերված փորձի վրա,կարող եմ եզրակացնել, որ ավագ խմբի մոտ ինքնուրույնության և ստեղծագործականակությունների զարգացման համար կարևոր է, որպեսզի երեխաների համար ստեղծվեն սովորելու բարենպաստ պայմաններ, որոնց պարագայում նրանք հնարավորություն կունենան ինքնուրույն ձեռք բերել գիտելիքներ, գտնել խնդիրների լուծումներ, հաղթահարել ուսումնառության ընթացքում հանդիպած դժվարությունները:

Այն սաները, որոնց մեջ մանկավարժական հաջող գործունեության ընթացքում ձևավորվում են ինքնուրույնության հակումները, որպես կանոն, բավական մեծ հետաքրքրություն են ցուցաբերում ուսման հանդեպ, մեծապես ձգտում են նոր գիտելիքներ ստանալ, վերլուծություններ և մտահանգումներ կատարել: Այսպիսի սաները ևս կարող են բազմաթիվ սխալներ կատարել իրենց ուսումնառության ընթացքում, սակայն նրանց առավելությունը կայանում է նրանում, որ կատարած սխալներից այս աշակերտները չեն հուսահատվում և փորձում են ուղղել այդ սխալներ: Սանի մեջ ինքնուրույնությանը նախաձեռնողականության զգացումը զուգորդվում է նաև ինքնավերահսկողության և կամային հատկանիշների զարգացմամբ:

Այս համատեքստում կարևոր և առանցքային է նաև մանկավարժի դերը: Նրա խնդիրն է ստեղծել բարենպաստ հոգեբանական մթնոլորտ, որի պարագայում սաները հետաքրքրված և շահագրգռված կլինեն ուսումնական գործընթացով, կձգտեն ակտիվության և նախաձեռնողականության, ինչպես նաև ընդհանուր ինքնուրույնության: Դրա համար մանկավարժը կարող է կիրառել ուսումնական գործունեության կազմակերպման նորագույն մեթոդները, տեղեկատվական տեխնոլոգիաները, սաների հետ աշխատանք կատարելու անհատական և խմբակային ձևեր, ինքնուրույն և ստեղծագործական աշխատանքներ և այն:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. https://lib.armedu.am/category/56
2. https://usum.am/load/ashakertneri_inqnowrowyn_gorcowneowtyan_kazmakerpman_d_ ery/128-1-0-3575
3. Կ. Թորոսյան, Կ. Չիբուխչյան, Մ. Մանուկյան, Մեթոդական աշխատանքը դպրոցում, ձեռնարկ, «Զանգակ» հրատարակչություն, 2014 թ.
4. Белоысов А.К. //Психология общения 2015
5. Туник Е.Е Диагностика креативности